



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

19.08.15 N 44/04/9638 - 15
Ձեր N _____

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, Ք. ԱԼԱՎԵՐԴԻ, ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ 8/1
ԱԼԱՎԵՐԴԻՈՒ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՏԻԿԻՆ ԱՆՈՒՇ ԷՎՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Էվոյան

Ի պատասխան Ձեր 2015 թվականի օգոստոսի 13-ի գրության՝ Ալավերդի քաղաքի բնակիչների կողմից աղետամոքսային գանգատների կապակցությամբ ստացված ահազանգերի վերաբերյալ, հայտնում եմ, որ ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կողմից կատարվել է ուսումնասիրություն՝ գրության մեջ նշված հանգամանքները պարզելու նպատակով:

Պարզվել է, որ 2015 թվականի օգոստոս ամսվա ընթացքում Լոռու մարզի Ալավերդի քաղաքի բնակչության շրջանում աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկումներ կամ համաճարակաբանորեն իրար հետ կապված բազմակի դեպքեր չեն արձանագրվել: 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչև 14-ն ընկած ժամանակահատվածում՝

1. «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ինֆեկցիոն բաժանմունքում հոսպիտալացվել է սուր աղիքային ինֆեկցիա ախտորոշումով 15 հիվանդ, որոնցից 5-ը՝ 0-7 տարեկան: Հիվանդներն ունեցել են ուժեղ ցավեր ստամոքսի շրջանում, սրտխառնոց, փսխում, լուծ, ընդհանուր թուլություն, ջերմության բարձրացում (ոչ բոլորի մոտ): 15 հիվանդներից 5-ը դուրս են գրվել՝ աղիքային վարակիչ հիվանդություն հաստատված հարուցիչով ախտորոշմամբ, մնացած

10-ը՝ աղիքային վարակիչ հիվանդություն չհաստատված հարուցիչով ախտորոշմամբ: Հիվանդության դեպքերն արձանագրվել են Ալավերդի քաղաքի հետևյալ թաղամասերում՝ Սայաթ-Նովա՝ 3 հիվանդ, Ձ. Անդրանիկի՝ 4 հիվանդ, Ջրավազանի՝ 2 հիվանդ, Խուոյակովի՝ 3 հիվանդ, գյուղ Շնող՝ 1 հիվանդ, գյուղ Մղարթ՝ 1 հիվանդ, գյուղ Թեղուտ՝ 1 հիվանդ:

2. Նշված ժամանակահատվածում «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկա դիմել է աղետսամոքսային խանգարումներով 30 հիվանդ, որոնցից 26-ը՝ 0-7 տարեկան երեխա: Հիվանդության դեպքերն արձանագրվել են Ալավերդի քաղաքի հետևյալ թաղամասերում՝ Սայաթ-Նովա՝ 7 հիվանդ, Ձ. Անդրանիկի՝ 7 հիվանդ, Խուոյակովի՝ 7 հիվանդ, Էնգելսի՝ 4 հիվանդ, Դեբետի՝ 1 հիվանդ, Մարքսի՝ 1 հիվանդ, գյուղ Հաղպատ՝ 1 հիվանդ, Սանահին Սարահարթ՝ 2 հիվանդ: Բոլոր դիմողներն ստացել են ամբուլատոր բուժում՝ առողջացում ելքով: Հիվանդներն իրենց անամնեզում ընդհանուր օգտագործված սննդամթերք չեն նշում, հույս ամսվա ընթացքում տարածքից չեն բացակայել, աղիքային վարակիչ հիվանդություններով հիվանդների հետ չեն շփվել, Դեբետ գետում չեն լողացել:
3. Ալավերդի քաղաքի նշված հասցեների ջրամատակարարման ապահովվում է «Հայջրնուդկոյուդի» ՓԲԸ-ի կողմից՝ «Լոռի-Բերդ-Ալավերդի» ջրատարի միջոցով: 2015 թվականի ընթացքում փոխվել են Ալավերդի քաղաքի, այդ թվում՝ Սայաթ-Նովա, Ձ. Անդրանիկ, Ջրավազան և Խուոյակով փողոցների, խմելու ջրի ներքին ցանցի ջրամատակարարման համակարգի խողովակները: Նշված ժամանակահատվածում վերոհիշյալ թաղամասերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վթարներ չեն արձանագրվել:
4. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշտական լաբորատոր հսկողություն է սահմանվել բնակչությանը մատակարարվող խմելու ջրի որակի նկատմամբ: Հաշվի առնելով շոգ եղանակային պայմանները, ներկայումս կրկնապատկված է հետազոտության նպատակով ընտրողաբար իրականացվող նմուշառումը: Այսպես՝ օգոստոս ամսվան ընթացքում կատարվել է Ալավերդի քաղաքի խմելու ջրի 35 նմուշի հետազոտություն՝ մանրէաբանական, սանիտարաքիմիական ցուցանիշների և մնացորդային քլորի նկատմամբ: Շեղումներ չեն արձանագրվել:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի Ալավերդու տեղամասի գերատեսչական լաբորատորիայի կողմից կատարվել են խմելու ջրի հետևյալ հետազոտությունները.

- մանրէաբանական հետազոտություն՝ 11 նմուշ, շեղումներ չեն արձանագրվել,
- մնացորդային քլորի որոշում՝ 15 նմուշ, շեղումներ չեն արձանագրվել:

2015 թվականի օգոստոսի 9-ին երկու ժամով ընդհատվել է խմելու ջրի քլորացումը՝ քլորի տարայի փոխման պատճառով:



ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Ժանետա Բեդյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի ԱՊ տեսչության
վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների
համաճարակաբանության բաժին
Հեռ.՝ 650305/117